

ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՀԱՅՈՑ¹

Ի ԿԱՄԵՆԻՑ ՓՈՏՈՒԵԱՆ

16 Օգոստոս. — 16 Սեպտեմբեր. 1883:

ՅԱՌԱՋԱԲԱՆ Ի ՏԵՂ

Լեհաստան աշխարհն՝ ԺԱ դարէն սկսեալ՝ մեր ազգին Հայ գաղթականաց ապաստանարան եղած է. ուր մեծամեծ արտօնութիւններ վայելած են բազմաթիւ աղգայի՛ք, քանի քանի անգամ թողած իրենց հայրենիքը, իրենց փառաչէն Անին, երկրորդ հայրենիք ընտրած են այդ աշխարհքը: Նշանաւոր են ասոր երկու քաղաքները, Կալիցիոյ մէջ Իլվով (կամ ըստ մեր ձեռագրաց Լով) որ այժմ՝ գերմանական անուամբ Լեմպերկ կը կոչուի, Փոտոլիոյ նահանգին մէջ՝ Կամենից, զոր Հայք շինած և շէնցուցած են, և 600 տարի Հայոց քաղաք համա-

1. Այսպէս է անուն պատկերին ընդ համօրէն Լեհաստան, Matka Boska Armianska.